



1700-ԱՄՅԱԿ

Հ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՄԻ ԷՋ ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑՈՒ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունն իր բազմադարյան գոյության ընթացքում, ի թիվս մեր ժողովրդին մատուցած այլևայլ ծառայությունների, անուրանալի ավանդ է ներդրել նաև հայ մշակույթի հարուստ անդամատանում: Այստեղ աչքի ընկած մշակութային գործիչների շարքում բացառիկ տեղ ունի 17-րդ դարի ականավոր իմաստասեր ու թարգմանիչ Ստեփանոս Լեհացին, որի կյանքն ու գործունեությունը հայրենի մշակույթին անձնուրաց ծառայելու մի փայլուն օրինակ է, որն այսօր էլ կարող է դաստիարակիչ նշանակություն ունենալ հատկապես օտար երկրներում ապրող մեր հայրենակիցներից շատերի համար:

Ստ. Լեհացին ծնվել է 17-րդ դարի սկզբին Մայր Հայրենիքից հեռու՝ Լվովի հայկական ծաղկուն գաղթօջախում: Առաքել Դավրիժեցու բառերով ասած՝ էր «յազատ և ի փարթամ տանէ, բարեպաշտ ծնողաց զաւակ»¹, ստացել էր ոչ հայեցի կրթություն և ըստ էության չէր տիրապետում մայրենի լեզվին: Կյանքն իր սովորական հունով ընթանալու դեպքում, ամենայն հավանականությամբ, այլ ընթացք կունենար Ստ. Լեհացու գործունեությունը, և բացառված չէ, որ շատերի նման նա էլ կօտարանար հայրենի ավանդույթներին, մշակույթին ու լեզվին և հազիվ թե այսօր հիշվեր հայ մշակույթի մեծ երախտավորների շարքում: Բայց այդպես չեղավ, որովհետև 17-րդ դարի 30-ական թվականների սկզբին լեհական իշխանությունների աջակցությամբ կաթոլիկ քարոզիչները սկիզբ դրեցին մի ահավոր գործընթացի, որը գրականության մեջ հայտնի է լեհահայերի «Բռնի միութիւն» անունով: Ցավոք, քչերին հաջողվեց խույս տալ լեհահայերի բռնի դավանափո-

¹ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի: Երևան, 1990, էջ 322:

խորությունից, հետևաբար և ուծացումից: Այդ քչերից մեկը Ստեփանոս Լեհացին էր, որի հեռատես ու հայրենասեր ծնողները, կանխազգալով իրենց շնորհաշատ զավակին սպառնացող ուծացման վտանգը, կարողացան փրկել նրան՝ ուղարկելով Մայր Հայրենիք: Գալով Հայաստան, երիտասարդ Ստեփանոսն ընդունվում է Ս. Էջմիածնի միաբանության անդամ և այստեղ էլ սովորում «զլեզու և զգիր Հայոց»²: Լեհերենից ու լատիներենից բացի տիրապետելով նաև մայրենիին, երիտասարդ Ստեփանոսը, շարունակում է Առ. Դավրիժեցին, «Այնուհետև սկսաւ ընթեռնուլ զԱստուածաշունչ զիրս և զերկոտասան վարդապետաց, և զփիլիսոփայից. և վասն զի յառաջմէ զիտէր զլեզու և զգիրս Լատինացոց, յետոյ ուսաւ և զմերս, և զերկոսեանն առ միմեանս համեմատելով խոկայր ի նոյնն և մտավարժէր, վասն որոյ առաւելաւ քան զայլ ընկերս իւր. այլ և էր մտօքն սուր և ծննդական, առնող և պահող և միշտ ընթերցող. և վարուքն մաքրակենցաղ՝ և պարկեշտ»³: Ծնորհիվ այդ ամենի, Ստ. Լեհացին շուտով աչքի է ընկնում իր գործընկերների շրջանում՝ արժանանալով ժամանակի կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցու ուշադրությանը: Վերջինս նրան ձեռնադրում է կուսակրոն քահանա, իսկ որոշ ժամանակ անց՝ վարդապետ: Նույնպիսի ջերմ վերաբերմունքի է արժանանում Ստ. Լեհացին նաև Փիլիպոսին հաջորդած Հակոբ Զուղայեցու կողմից, որը կյանքի վերջին տարիներին նրան նշանակում է իր տեղապահ:

Մեծ է հայ մշակույթին Ստեփանոս Լեհացու մատուցած ծառայությունը ոչ միայն իր թողած ինքնուրույն ու թարգմանական հարուստ ժառանգությամբ, այլև 17-րդ դարի առաջին կեսին Հայաստանում և հենց Ս. Էջմիածնում կրթության, գիտության և փիլիսոփայության հանդեպ հետաքրքրության արթնացման ու գիտամշակութային կյանքի աշխուժացման գործում: Եվ եթե դարասկզբին, ինչպես Առ. Դավրիժեցին է գրում, «անպիտանացեալ էր զիրքն յաչս մարդկան, և իբրև զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հողով և մոխրով»⁴, իսկ դարակեսին արդեն ստեղծվում էին կոթողային գործեր, որոնցից մեկն էր Առ. Դավրիժեցու երկը, ապա այդ վերընթացի մեջ բացառիկ դեր ունի նաև Ստեփանոս Լեհացին թե՛ որպես ստեղծագործող մտավորական, թե՛ որպես հմուտ մանկավարժ ու դաստիարակ: Բնավ պատահական չէ, որ ժամանակակիցների ուշադրությունից չի վրիպել նրա մատուցած թե՛ մեկ, և թե՛ մյուս ծառայությունը: Ըստ այդմ, եթե Առաքել Դավրիժեցին մեծ հիացմունքով ու ոգևորությամբ շարադրում է Ստ. Լեհացու թարգմանչական գործունեության մասին, ապա նրա երախտապարտ սան Ներսեսը երախտագիտության անզուսպ զգացումով խոսում է ուսուցչի Ս. Էջմիածնում ծավալած կրթական-դաստիարակչական արգասավոր գործունեության մասին՝ խնդրելով հիշել «զՍտեփանոս Իլովացի քաջ հոգևոր և թարգմանիչ Րաբունին, որ էր այր լի շնորհօք և հանճարով և սրբեալ հոգով սրբով, զի հանապազ ըստ աստուածատուր

² Նույն տեղում, էջ 323:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 219:

պարզեօքն զամենայն եղբարս կատարելագործէր փիլիսոփայական կրթութեամբ»⁵ (ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Ի դեպ՝ այդ կարգի անչափ կարևոր տեղեկություն է հայտնում մահ ինքը՝ Ստ. Լեհացին: Կեղծ-Դիոնիսիոս Աերոպագագու աշխատությունների թարգմանության կապակցությամբ 1662 թ. թողած հիշատակարանում անդրադառնալով այն հարցին, թե ինչու է ինքը ձեռնարկել այդօրինակ դժվարին գործ, ի թիվս այլ պատճառների նշում է. «Երկրորդ, հարկեալ գոլով առ ի խնդրոյ բարեմիտ եղբարցն, որք ի սուրբ աթոռս Էջմիածնին ի հրահանգս իմաստասիրութեան կրթէին զանձինս իրեանց, ո՛չ կարացի անտես առնել, այլ զանց արարեալ զտկարութեամբս իմով, յօրինեցայ զայս իրողութիւնս յաւարտ հասուցանել, քանզի զայսու ժամանակաբազումք էին երևելիք վարդապետք քաջաբանք, բանաստեղծք, աստուածային գրոց քաջ գիտունք և հմուտք, յորոց մի էր և Առաքեալ վարդապետն քաջ ուրբունի և վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցկայարմար բանիւք դրոշմեաց և իւր յիշատակ անջնջելի եթող»⁶ (ընդգծ. իմն է - Հ. Մ.): Ինչպես տեսնում ենք, Ստ. Լեհացին տվյալ դեպքում ոչ թե սեփական մախաձեռնությամբ է թարգմանել այդ աշխատությունները, այլ պարզապես Ս. Էջմիածնի միաբանության այն անդամների պահանջով, ովքեր զգում էին դրանց կարիքը, բայց չէին կարող այլ լեզվով ընթերցել դրանք: Այլ խոսքով ասած, թե՛ որպես ուսուցիչ, և թե՛ որպես թարգմանիչ Ստ. Լեհացին անում էր ամեն ինչ՝ մպաստելու համար իր հոգևոր եղբայրների մտավոր զարգացմանը: Բերված հատվածն ուշագրավ է մահ այն տեսակետից, թե որքան բարձր է գնահատվում Առաքել Դավրիժեցու անձն ու գործը: Դա, որքան ինձ հայտնի է, Առ. Դավրիժեցու կոթողային աշխատության գնահատության առաջին փաստն է, քանզի, ինչպես գիտենք, այդ նույն թվականին նոր միայն Առ. Դավրիժեցին ընդհանուր առմամբ ավարտել էր իր երկը: Ասում են ընդհանուր առմամբ, որովհետև վաղուց պարզել են, որ պատմագիրը հետագայում նույնպես շարունակել է այն հարստացնել ու լրացնել նոր փաստերով⁷:

Նպատակ չունենալով մանրամասն ներկայացնելու Ստեփանոս Լեհացու կյանքը, գործունեությունն ու թողած մատենագրական հարուստ ժառանգությունը, ասեմ միայն, որ մինչև կյանքի վերջը (1689 թ.) անխոնջ կերպով զբաղվելով գրական-թարգմանչական բեղուն գործունեությամբ, Ստ. Լեհացին լատիներենից, ինչպես նաև լեհերենից հայերեն է թարգմանել համաշխարհային մշակույթի բազմաթիվ արժեքավոր հուշարձաններ, որոնցից առանձնապես հիշատակելի են Հովսեփ Փլավիոսի «Հրեական պատերազմը», «Հայելի վարուց» բարոյախրատական գրույցների ժողովածուն, Կեղծ-Դիոնիսիոս Աերոպագագու չորս աշխատությունը և դրանց մեկնությունները, «Ղուրանը», Արիստոտելի գլուխգործոց «Մետաֆիզիկա» աշխատությունը, «Բուրաստան աղօթից» ժողովածուն և այլն: Ցավոք, դրանցից

⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 110, էջ 466բ-467ա:

⁶ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 5171, էջ 368բ-369ա:

⁷ Տե՛ս Հր. Միրզոյան, Առաքել Դավրիժեցու Պատմության առաջին հրատարակության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, թիվ 2:

շատերը մինչև օրս մնում են անտիպ: Ստ. Լեհացու թարգմանած աշխատություններից երկրորդը տպագրության բախտին արժանացել է Հովսեփ Փլավիոսի «Հրեական պատերազմը» և այն էլ Էջմիածնի Ս. Գիրգոր Լուսավորիչ տպարանում⁸:

Ծիշտ է, Ստեփանոս Լեհացու թարգմանչական գործունեությանն այլևայլ առիթներով անդրադարձել են շատերը⁹, բայց արդարությունը պահանջում է ասել, որ, դժբախտաբար, առայժմ չկա նրա թարգմանչական-մատենագրական գործունեությանը նվիրված քիչ թե շատ հանգամանալից ուսումնասիրություն, ուստի շատ հարցեր մնում են չլուսաբանված, եթե չասենք՝ մութ: Օրինակ, պարզվում է, որ Ստ. Լեհացին օժտված է եղել նաև բանաստեղծական ակնհայտ կարողություններով, և հայերեն է թարգմանել ոչ միայն արձակ գործեր, այլև չափածո ստեղծագործություններ, իսկ երբեմն էլ՝ ինքն է ստեղծագործել նման երկեր: Այդ տեսակետից արժեքավոր նյութ է տալիս «Բուրաստան աղօթից» ժողովածուն, որը, իմիջիայլոց, միակն է Ստ. Լեհացու թարգմանած գործերից, որը լույս է տեսել թարգմանչի կենդանության ժամանակ (Վենետիկ, 1685): Ասենք նաև, որ տպագիրը թե՛ կառուցվածքով, և թե՛ բովանդակությամբ էապես տարբերվում է ձեռագրից: Ընդ որում, տպագրից դուրս են մնացել հատկապես չափածո ստեղծագործությունները, որոնց մեջ կան ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն գործեր:

Որ իսկապես դրանց մի մասի հեղինակը Ստեփանոս Լեհացին է, երևում է Մաշտոցի անվ. Մատենադարանի № 553 ձեռագրի 181ա-բ էջերում գետեղված 18 տողանոց ստեղծագործության վերնագրից՝ «Մաղթանք իբր յիշատակարան ըստ անուան թարգմանողին», որի կենտ տողերի սկզբնատառերը հոդում են «Ստեփաննոս» անունը:

Համոզված լինելով, որ այս և հարակից հարցերը ապագայում կարժանանան բանասեր մասնագետների ուշադրությանը, ցանկանում եմ ընթերցողի դատին ներկայացնել Լեհացու չափածո թարգմանություններից, իմ կարծիքով, ամենից արժեքավորը, որը կարևոր է ոչ միայն թարգմանչի բանաստեղծական ձիրքի մասին պատկերացում կազմելու տեսակետից, այլև բովանդակության առումով: Վերջապես, այն մասամբ հարստացնում է մեր պատկերացումները միջնադարյան հայ և արևմտաեվրոպական մշակութային առնչությունների մասին: Բանն այն է, որ խնդրո առարկա ստեղծագործությունը պատկանում է 12-րդ դարի, Ղևոնդ Ալիշանի

⁸ Տե՛ս «Գիրք պատմութեանց Յովսեպոսի Եբրայեցոյ արարեալ Յաղագս պատերազմի հրէից ընդ հոովմայեցիս, և աւերման Երուսաղէմի»: Էջմիածին, 1787:

⁹ Տե՛ս, օրինակ, Ն. Ակինյան, Ստեփանոս վարդապետ Լեհացի, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1912, Գ. Տեր-Մկրտչյան, «Հայկականք», ԺԳ-ԺԹ, Վաղարշապատ, 1899, նույնը՝ «Հայագիտական ուսումնասիրություններ», գիրք Ա, Երևան, 1979, Քնարիկ Տեր-Դավթյան, «Հայելի վարուցի» հայերեն թարգմանության հարցի շուրջը, «Լրաբեր», 1981, թիվ 10, նույնը՝ «Հայելի վարուց» միջնադարյան բարոյախրատական գրույցների ժողովածու (տե՛ս «Հայելի վարուց», աշխատասիրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի, Երևան, 1994), Հ. Միրզոյան, Արիստոտելի «Մետաֆիզիկայի» հայերեն թարգմանության ու մեկնության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, թիվ 1, նույնը՝ XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, և այլն:

բառերով ասած, «արևմտեան Եկեղեցւոյ արեգակն» և «հոգի», «անհաւասարելի»¹⁰ մեծութիւն Ս. Բեռնարդոսի գրչին: Ասենք նաև, որ այս փաստը մինչև օրս անհայտ է մնացել ոչ միայն հայ մշակույթի պատմութեամբ զբաղվող մասնագետներին, այլև հենց Ս. Բեռնարդոսի գրական ժառանգութեան հայերեն թարգմանություններն ուսումնասիրած հայագետներին: Օրինակ, հայ մատենագրութեան պատմութեան քաջագիտակ Հ. Անասյանն իր կոթողային աշխատութեան երկրորդ հատորում «Բեռնարդոս Կլարավալլենցի (Bernardus Claravallensis)» բառահոդվածում գրում է. «Հոռմեական Եկեղեցու հայրերից, ծն. 1091 թ. Դիքիական Փոնտանայի դղյակում (Բուրգունդիա, այժմ՝ Ֆրանսիա) և մեռ. 1153 թ.: Հիմնադիր է Կլարա-Վալլիսի (Clervaux) նշանավոր աբբայարանի: Իր աշխատությունները գրել է լատիներեն: ԺԸ դ. Ղուկաս Խարբերդեցին նրա հեղինակություններից հայերենի է թարգմանել մի շարք քարոզներ և այլ երկեր՝ հավանաբար օգտագործելով նրա լիակատար երկերի այն հրատարակությունը, որը լույս էր տեսել Փարիզում 1690 թ., երկու հատորով: Հայերեն թարգմանությամբ հայտնի են նաև նրա գրչին պատկանող մանր հատվածներ»¹¹ (ընդգծումն իմն է - Հ. Մ.): Ինչպես տեսնում ենք, անվանի հայագետը Ղուկաս Խարբերդեցու թարգմանություններից բացի ընդունում է միայն Ս. Բեռնարդոսի «գրչին պատկանող մանր հատվածներ»-ի հայերեն թարգմանությունը, մինչդեռ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող երկը ոչ թե «մանր հատված» է, այլ հիսուն քառասուղերից բաղկացած ամբողջական պոեմ, որն զբաղեցնում է «Բուրաստան աղօթից» ժողովածուի մեզ հայտնի միակ ձեռագրի (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 553) 225ա-229բ էջերը և վերնագրված է՝ «Երգ ոտանաւոր առ Յիսուս Քրիստոս, արարեալ սրբոյն Բեռնարտոսի»: Ասենք նաև, որ մեզ հետաքրքրող ձեռագիրը, համաձայն նկարագրողների, գրվել է «ԺԷ դ. (1673 թվականից առաջ)»¹²: Ուշագրավ է այն փաստը, որ Ստ. Լեհացին իր այս թարգմանությունն իրականացրել է Ս. Բեռնարդոսի «լիակատար» երկերի երկհատորանոց հրատարակությունից շուրջ երկու տասնամյակ առաջ, այսինքն՝ իր ձեռքի տակ ունեցել է նրա երկերի այլ հրատարակություն, գուցե՛ն՝ ձեռագիր օրինակ:

Տեքստը հրատարակության ենք ներկայացնում գրեթե առանց միջամտության. միայն բացել ենք համառոտագրությունները, իսկ կետադրությունը պատշաճեցրել հայոց լեզվի ներկայիս կանոններին:

¹⁰ Տե՛ս Հ. Ղեւոնդ Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր: Վեներիկ, 1873, էջ 174-175:

¹¹ Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն: Ե-ԺԸ դդ., հ. Բ, Երևան, 1976, էջ 1476:

¹² Ցուցակ ձեռագրաց, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան: Հ. Ա., Երևան, 1965, էջ 347:

**Երգ ոտանաւոր առ Յիսուս Քրիստոս,
արարեալ Սրբոյն Բեռնարտոսի**

Ո՛վ յիշատակ քաղցր Յիսուսի,
ստո՛յգ ցնծութեան փառք սրբի,
քան ըզմեղր յոյժ քաղցրալի՛,
նորա մերչ գոլն է բաղչալի:

Ո՛չ ինչ երգի ախորժագոյն,
եւ ո՛չ լսի ինչ հեշտագոյն,
ո՛չ մարածի մեզ քաղցրագոյն,
քան ըզՅիսուս ծնունդ Աստծոյն:

Ո՛վ Յիսուս յոյս մեղաւորաց,
զիա՞րդ գթածես հայցողաց,
զիա՞րդ բարի զքեզ խնդրողաց,
ես առաւել զքեզ գպողաց:

Յիսուս՝ սրբի՛ց մեր քաղցրութիւն,
ջուր կենդանի, պայծառութիւն,
գերազանց ես, քան զցանկութիւն,
եւ զամենայն ուրախութիւն:

Ո՛չ մեր լեզու զօրէ ասել,
եւ ո՛չ գիրըն շարագրել,
ըզփորչ առօղ հաւաք ունել,
զի՞նչ է զՅիսուս Քրիստոս սիրել:

ԶՅիսուս խնդրե՛մ ի յանկողին,
փակեալ սրբի յառագաստի,
առանցնակի եւ յապենի, .
խնդրեմ ըզնա փենչմամբ սրբի:

Ընդ Մարեմայ յառաւօտի,
զՅիսուս խնդրեմ ի փապանի,
հեծեծանօք գոչմամբ սրբի,
մարօք, եւ ո՛չ աչօք մարմնի:

Զշիրին թացից արտասուելով,
լալականօք զտեղին լնով,
յոբս Յիսուսի անկանելով,
գրկախառն համբուրելով:

Քոյոց հեպոց փութամ հասնել,
փափագելով քեզ ծառայել,
ըզհառաչանս ո՛չ դադարել,
մինչ ինչ տացի զքեզ ըմբռնել:

Յիսուս՝ արքայ ըսքանչելի,
յաղթօղ մարտի երեւելի,
դու քաղցրութիւն անճառելի,
բոլորովին փափագելի:

Տեր մեր Յիսուս, ընդ մեզ մնա՛,
եւ մեզ լուսով լուսաւորեա՛,
ըզմեզ մտաց ի բաց մերժեա՛,
զթախծեալս սիրով մխիթարեա՛:

Յորժամ ի սիրտս մեր ակնարկես,
զճմարտութիւն ի սոյնս ծագես,
զունայնութիւն աստի սպառես
եւ ի ներքո գտեր քո վառես:

Սեր Յիսուսի յոյժ քաղցրագոյն,
ճմարտապէս յոյժ հեշտագոյն,
բիր առաւել ախորժագոյն.
քան զմեր ասելն է վեհագոյն:

Զայս չարչարանք նորա յայտնեն,
հեղումն արեան եւ մահ պարմեն,
ըզփրկութիւն ի մեզ գործեն,
քաղցր Տեառն տեսոյն արժան առնեն:

ՁՅիսուս ամենք ճանաչեցէք,
սիրոյն նորա փափագեցէք,
ջերմ սիրով զնա խնդրեցէք,
եւ զչեզ ի նա բորբոքեցէք:

Այսպէս զարփօղն սիրեցէք,
փոխարինաց զսէր հապուցէք,
յայս հոգի անոյշ ընթանայցէք,
ըղձիւ զուխարս կախարեցէք:

Յիսուս՝ պարճառ բարեգթութեան,
յոյս բոլորին ուրախութեան,
աղբիւր շնորհի եւ սուրբ փոփման,
եւ սպոյգ սրբի վայելչութեան:

Յիսուս՝ բարի զգացայց յանձին,
զառափութիւն սիրոյ քոյին,
մերչ քո գոլովդ փութ իմ անձին,
զքոյդ փեսանել զփառս երկնային:

Ո՛չ եմ կարօղ զարժան խօսել,
բայց ո՛չ կամիմ ըզքեզ լռել,
սէր քո փա ինչ համարչակել,
ի քեզ միայն ուրախ լինել:

Քոյդ ո՛վ Յիսուս սիրելութիւն,
մտաց քաղցր սփոփութիւն,
թարց փաղարկութեան փայ զլիութիւն,
անյագ սրիպէ ի ցանկութիւն:

Որք ճաշակեն դարչեալ սովին,
եւ որք ըմպեն, եւս ծարաւին,
ցանկալ իմիք ո՛չ ինչ խորհին,
բայց Յիսուսի, զոր միշտ փոփին:

Չով որ սեր քո ա՛րքույանէ,
զիպէ զՅիսուս, զիարդ քաղցր է,
յոյժ երջանիկ, որում ջամբէ,
չիք աւելի, զոր նայն խնդրէ:

Յիսուս՝ պարծանք վերնոյն խմբի,
ի լսելիս երգ ցանկալի,
ի շրթունս խորիսիս մեղուի,
եւ ի սրտի ունիւն երկնի:

Քեզ բիր անգամ փափագիմ ես,
Յիսուս, յորժամ առ իս գայցես,
յորժամ ուրախ զիս արասցես,
եւ քեւ զանչն իմ յագեցուսցես:

Սեր քո Յիսուս անսպառական,
սրտի լքումն անհատական,
դու ես աղբիւր մեղեր բղխման,
պարուղ կենաց մնացական:

Դու ծայրագոյն բարեգթութիւն,
սրտիս իմոյ վայելչութիւն,
անբաւելի իսկ բարութիւն,
քո զիս կապէ սիրելութիւն:

Բարի է ինչ զՅիսուս սիրել,
եւ աւելի ո՛չ ինչ խնդրել,
ինչ բնաւին անգօր լինել,
եւ կենդանի նմա տեսել:

Յիսուս փրկիչ յոյժ քաղցրագոյն
յոյս հառաչման առ քեզ հոգւոյն,
զքեզ արտասուք ուղիղք խնդրեն,
միտք ի խորոց սրտի գոչեն:

Ուր միանգամ պատրաստ գրայց,
զՅիսուս ընդ իս գոլ ցանկացայց,
ի գրանելն ուրախացայց,
երանի ինչ, յորժամ կալայց:

Յայնժամ գրկել եւ համբուրել,
քան զմեղրածաշ է առաւել,
վա՛շ ընդ մնա անհատ լինել,
աւա՛ղ զնովաւ շուր անցանել:

Չոր խնդրեցի, ի նա հայիմ,
ուն ցանկացի, այժմ ունիմ,
սիրով նորին լքեալ հալիմ,
բոլորովին սրտիւ այրիմ:

Յիսուս յորժամ այսպէս սիրի,
սէր այսպիսի ո՛չ շիջանի,
ո՛չ ջերմանայ, ո՛չ մեռանի,
յաւեր աճէ եւ բորբոքի:

Յամենայն ժամ այս սէր վառի,
եւ քաղցրանայ զարմանալի,
ախորժապէս անոյշ լինի,
երջանկապէս է հեշտալի:

Այս սէր երկնուստ իսկ իջանէ,
զսիրտ իմ ընդ իւր ներս բեւեռէ,
զմիտս բնաւ իմ բորբոքէ,
եւ զհոգիս մխիթարէ:

Ո՛վ հրակիզումն երանելի,
ո՛վ ցանկութիւն բորբոքելի,
ո՛վ զօվայցումն ախորժելի,
Հօր Աստուծոյ սիրել զՈրդի:

Յիսուս ծաղիկ կուսին ծնողի,
սէր քաղցրութեան զարմանալի,
քեզ փառք պատիւ ինքնագոյի,
արքայութիւն երանելի:

Ե՛կ, թագաւոր. ե՛կ, յոյժ բարի,
Աստուած փառաց անբաւելի,

ծագեա՛ մտաց լոյս աւելի,
վաղուց հետք ալն ունելի:

Քան զարեգակն դու պարզագոյն,
քան զպալասան անուշագոյն,
քան զամեն ինչ ես քաղցրագոյն,
եւ քան զայլս սիրելագոյն:

Որոյ ճաշակ այսպէս գործէ,
եւ հոտ այսպէս զովացնէ,
յորում միտք իմ իսկ տկարէ,
բայց սիրողիդ բաւական է:

Լեր, աղաչեմ իմ ցընծութիւն,
որ ես յերին վարձաբարութիւն,
դու միայն իմ վայելչութիւն
եւ փառք եւ յոյս եւ յաղթութիւն:

Դու ես մտաց հեշտացուցիչ,
սիրոյ իմոյ իսկ կատարիչ,
դու իմ պարծանք բարձրացուցիչ,
եւ աշխարհի ողջացուցիչ:

Ո՛վ սիրելի, դարձիր իսկոյն,
Եակից Հօր վերին աջոյն,
քաջ հաղթեցեր քոյդ թշնամոյն,
արդ՝ վայելեա ի փառս վերնոյն:

Չհետ քո եկից, յոր վայր շարժիս,
յինէն բառնիլ ո՛չ զօրասցիս,
յորժամ բարձցես զսիրտ իմաստիս,
Յիսուս պարծանք մերոյ սեռիս:

Բնակիչք երկնից, յառաջ ելէք,
ըզդրունս չեր վեր ամբարշէք,
քաջ յաղթողին երգս ասացէք,
զՅիսուս արքայն ողջունեցէք:

Տէր զօրութեանց, փէր մեծութեան,
արքայ պայծառ մեծ յաղթութեան,
Յիսուս փառաւոր մեր թողութեան.
պապիւ երկնից արքայութեան:

Դու ես աղբիւր ողորմութեան,
դու ճշմարտի՝ լոյս բնակութեան,
ի բաց վանեա՝ զամպ տրտմութեան՝
փալով մեզ զլոյս վայելչութեան:

Ըզբեզ երկնային պար հոչակէ,
զօրհներգութիւնս քո ծաւալէ,
Յիսուս զաշխարհ ուրախ առնէ,
զմեզ ընդ Հօր հաշտ ցուցանէ:

Խաղաղութեամբ Յիսուս իշխէ,
որքան զամեն միտս անցանէ,
յայսմիկ հոգիս իմ փափագէ,
եւ վայելել նմին ճեպէ:

Յիսուս առ Հայր վերին դարչաւ,
զարքայութիւն իւր ընկալաւ,
սիրտ իմ յինէն աստ հեռացաւ,
զհետ Յիսուսի իսկ ընթացաւ:

Ձնա գովեսցուք ըղջիւք ուխտից,
յայնիւ երգոց եւ աղօթից,
զի արասցէ ժառանգակից,
զմեզ իւր փառաց ի յարկս երկնից:

Ամէն:

